

ԱԳՐՈՒՐԱՏՈՒ

ՓԵՏՐՎԱՐ 25-ՄԱՐՏ 5 2014 Թ. ԹԻՎ 4 (2026)

ՏՄՆՆՈՐԵԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԽՐԱՆՈՒՍՎՈՒՄ ԵՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կառավարության նիստում ՀՀ վարչապետը անդրադարձել է Արարատյան դաշտի ջրօգտագործման ոլորտի տեսչական ստուգումներին, որոնց արդյունքում որոշ հարցադրումներ, բացահայտումներ են արձանագրվել: Խնդրի առնչությամբ պարզաբանում է տվել ՀՀ բնապահպանության նախարարը:

Այնուհետև կառավարությունը ձեռնամուխ է եղել օրակարգի հարցերի քննարկմանը: Նախ՝ հիմնվելու է հերթական ազատ փորձարկման գոտին, այնուհետև ընդլայնվելու են լուրիկի, վարունգի և հուլանդական վարդի ջերմոցային փորձարկումները:

... Մեկ այլ որոշմամբ՝ կառավարությունը «Էկոփոմարտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ներդրումային ծրագրով՝ ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքների ԱԱՀ վճարման ժամկետը հեղափոխել է մինչև 2017թ. փետրվարի 25-ը: Ընկերությունը, որը զբաղվում է հուլանդական բարձրակարգ վարդերի աճեցմամբ և իրացմամբ, արդեն հաջողությամբ իրականացրել է ներդրումային երկու ծրագիր: Այս ծրագրով՝ 3 հեկտարով ընդլայնվելու է գործող ջերմոցային փորձարկումը, ստեղծվելու են նոր աշխատատեղեր:

... «Բիո գրուպ» ՍՊԸ կողմից ԱԱՀ վճարման ժամկետը երկարաձգելու որոշում է կայացվել՝ ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող ապրանքների վերաբերյալ: Ընկերությունը հիմնադրվել է 2013թ.-ին: Ներկայումս Կոտայքի մարզի Զրվեժ համայնքում կառուցում է ջերմոցային փորձարկում, որը հուլանդական փոխնուղղակիորով փորձարկման արտադրելու է շուրջ 700 մլն դրամի լուրիկ և վարունգ:

... ՀՀ գն սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 2013թ. իրականացրած ուսումնասիրությամբ, Արմավիրի մարզի Աղավնատուն և Քայ համայնքների խաղողի 0.77 հա այգեպարտեզում հայրենաբերված որդավիճի դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու համար գործադիրը հապկացրել է մոտ 8 մլն դրամ:

ՈՌՈԳՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանն Արագածոտնի մարզի Օհանավան և Կարբի գյուղերի խնձորի այգիների ոռոգման հետ կապված խնդիրը քննարկել է ՏԿԸ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանի և Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի հետ:

Նշված համայնքների բնակիչները մտահոգություն էին հայտնել իրենց խնձորի այգիները սնուցող ոռոգման ջրանցքի վրա նոր ՀԷԿ-ի կառուցման առնչությամբ:

Ա. Անդրեասյանը փողկապրել է, որ էներգետիկ ծրագիրը նախատեսվում է իրականացնել Արզնի-Շամիրամի դոպրացիոն ջրանցքի վրա, և այն այգիների տարածքը սպասարկող «Քասախ» ԶՕԸ-ի կողմից ոռոգման նպատակով վերցվող ջրի հետ կապ չունի: Ծրագրի իրականացմանը համաձայնություն է տրվել միայն այն պայմանով, որ ՀԷԿ-ը պետք է գործի բացառապես ոռոգման ռեժիմով և, ոռոգման անխափան ապահովման առումով որևէ դժվարություն չպեղծվի և առաջացնի: Ծրագրի իրականացումը ենթադրում է, որ շահագործումից ի վեր չվերանորոգված ոռոգման արագաժողով համակարգը կփոխարինվի փակ համակարգով, ինչը կբարձրացնի ջրի կառավարման արդյունավետությունը:

Ա. Անդրեասյանը հավաստիացրել է, որ նախագծային բոլոր լուծումները համաձայնեցվում են համապատասխան կառույցների հետ՝ հիմքում ունենալով ոռոգման շրջանում ջուրն առաջնահերթ ոռոգմանն ուղղելու պահանջը:



Սիրելի կանայք, շնորհավորում ենք Ձեզ գարնանային այս հիասքանչ օրվա՝ Կանանց տոնի առթիվ: Տոնական օրը ևս մեկ հրաշալի առիթ է մեր երախտիքի և գնահատանքի խոսքերը հղելու Ձեզ՝ Ձեր սկիզբում, հոգատարության, ազգապահպան ու անկոտրում ոգու և ոգեշնչող ներկայության համար:

Դարեր ի վեր Հայ կնոջ առերևույթ փիտրուն ու խոցելի կերպարը միշտ գուգորդել է դժվարությունները հաղթահարելու անսպառ ուժով ու եռանդով: Նա ճի ընկրկել անգամ պատմության ամենածանր պահերին՝ յուրօրինակ ապավեն դառնալով, հույս ու հավատ ներշնչելով մեր ժողովրդին: Չի դադարել կրթել ու դաստիարակել, պաշտպանել ու բժշկել, ստեղծել ու ստեղծագործել՝ անսասան պահելով թե՛ ընտանիքի, թե՛ պետության հիմքերը:

Այսօր արդեն ընդլայնվել է Հայ կանանց ներգրավվածությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում, ինչը գովել է և միանշանակ նպաստելու է մեր պետականության կայացմանն, ամրապնդմանն ու զարգացմանը:

Թանկագին մայրեր, տիկնայք, քույրեր եւ դուստրեր,

Շնորհավորում ենք Ձեզ Մարտի 8-ի առթիվ, ցանկանում, որ ապրեք առողջ, երջանիկ, Ձեր իսկ երագած իրականության մեջ՝ շրջապատված անհուն սիրով ու հոգատարությամբ...

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՐԱԳԱԾՈՏՆՈՒՄ

Աշխատանքային այցն Արագածոտնի մարզ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը սկսել է մարզխորհրդի նիստից: Իր ելույթում նա անդրադարձել է պետական օժանդակման այն ծրագրերին, որոնց, ինչպես և մեր գյուղացիների ջանադիր աշխատանքի շնորհիվ, հնարավոր է եղել ապահովել նման արդյունքներ:

Խոսելով ընթացիկ տարվա խնդիրների մասին՝ նախարարը լավատեսորեն նշել է, որ՝ հանրապետության նախագահի հանձնարարությամբ պետական օժանդակման ծրագրերը շարունակական են լինելու, գյուղացին կրկին մարտնչի գներով ձեռք է բերելու սերմացու, պարարտանյութ և դիզելային վառելանյութ, ինչը Հայաստանում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ, հնարավոր է դարձնելու կրկնել նախորդ տարվա ձեռքբերումները:

Նշված ծրագրերից նախարարը կարևորել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որով մարզի մի շարք համայնքներում հիմնադրված արտօգտագործողների սպառողական կոոպերատիվները կարճ ժամանակում ապացուցել են իրենց փորձարկման շահավետությունը: Անցյալ տարի, ծրագրի շրջանակներում, նրանց հատկացվել է 19 տրակտոր և 27 գյուղատնտեսական այլ փոխնիկա: Ընթացիկ տարում նախատեսվում է՝ խնայված միջոցների հաշվին, մարզի ևս մի քանի համայնքներ ընդգրկել նշված ծրագրում: Նրանց համար ևս գյուղատնտեսական փոխնիկայի նոր խմբաքանակ է սպասվում:

Գ 2

ԿՈՒԵԳԻՎՅԻ ՆԻՍՏ

ՄՆՆՂԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԴԱՆԱՆՋՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրերս, ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի նախագահությամբ, կայացավ նախարարին կից կոլեգիայի նիստ: Քննարկման էր դրված «Մննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների փոխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

«Մննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների փոխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Մաքսային Միությանն անդամակցության նախապարտադրանքից առաջացած պարտավորություններով:

Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքի մակնշումը ներառող տեղեկատվությունը սահմանված է «Մննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գ 3

1

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արագածոտնի մարզպետը տեղեկացրել է, որ հողօգտագործման և շինարարական աշխատանքների փաստաթղթերը ձևակերպված են այնպես, որպեսզի համապատասխան աշխատանքներն ավարտվեն մինչև գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկը, և գյուղացիական տնտեսությունների համար դժվարություններ ու նոր խնդիրներ չառաջանան: Փոխվարչապետը մարզպետին առաջարկել է անձամբ հանդիպել համայնքների բնակիչների հետ, տեղում քննարկել բարձրագույն խնդիրներն ու անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացնել:

Նշվեց նաև, որ չեն կարող իրականացվել այնպիսի ծրագրեր, որոնք անգամ նվազագույն վնաս կհասցնեն գյուղացիական տնտեսություններին: Կառավարությունը ներկայումս քննարկում է նույն այդ տարածքում նոր հակակարկային կայաններ տեղադրելու հարցը՝ նախորդ տարիներին գրանցված կարկառակարությունից բերքը պաշտպանելու համար, հետևաբար՝ այդ համայնքներում, ոռոգման ջրի ապահովման և գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից, որևէ դժվարություն չի կարող ստեղծվել:

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՐԱԳԱԾՈՏՆՈՒՄ



Այնուհետև՝ նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար, նախարարը «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է Թաթուլ և Արագածոտնի համայնքների ղեկավարներ Ա. Հարոյանին և Մ. Ղազարյանին: Մարզի գյուղատնտեսության և 10 առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

Օրվա երկրորդ կեսին նախարարը, մարզպետ Սարգիս Սահակյանի հետ, այցելել է Ագարակ համայնքում գտնվող անհատ ձեռներեց Արմեն Ղուկասյանի ջերմարանային տնտեսություն, ծանոթացել արդեն հասունացած լուլիկի բերքահավաքին: 5300 մ² զբաղեցնող ջերմարանից, շաբաթական երկու անգամ, շուրջ 1000 կգ բարձրորակ լուլիկ է առաքվում շուկա: Ե՛վ նախարարը, և՛ մարզպետը գոհ են մնացել նման արդյունքից: Գյուղացիների հետ զրույցի ժամանակ նախարարն անդրադարձել է մթերումների խնդրին՝ նշելով, որ հարցը ՀՀ վարչապետի ուշադրության կենտրոնում է, և դրա բարելավման համար ներկայումս քննարկումներ են ընթանում տարբեր ոլորտներում:

ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՉԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը խորհրդակցության էր հրավիրել ոլորտի ճանաչված գիտնականների և մասնագետների՝ քննարկելու օրախնդիր մի հարց՝ 2007-2015 թվականների համար նախատեսված տավարաբուծության զարգացման ծրագրի շարունակելիության նպատակահարմարությունը:

Նախարարի հանձնարարությամբ նախարարության առողիտի բաժինը ներկայացրեց համապատասխան ուսումնասիրություն՝ տարածամեծ վճարման պայմանով, տոհմային երինջների ձեռքբերման համար կնքված պայմանագրային պարտավորությունների կատարման մասին:

Խորհրդակցության ժամանակ նշվեց, որ ծրագրի շրջանակներում հանրապետությունը ներկրված 1811 գլուխ տոհմային երինջները, տարածամեծ վճարման պայմանով, հարկացվել են 60-ից ավելի տնտեսավարող սուբյեկտների, որոնց մեծ մասը, սահմանված ժամկետներում, կատարել է պայմանագրային վճարումները:

Քննարկման ընթացքում մասնակիցները համոզված էին, որ ծրագիրն օգտակար է և պետք է շարունակություն ունենա:

Ելնելով արտահայտված կարծիքներից և առաջարկներից՝ նախարարը հանձնարարեց՝

* Ստեղծել հատուկ հանձնաժողով՝ բարձր մթերաբու կենդանիների ներկրման ամբողջ գործընթացը վերահսկելու համար:

* Ներկրվող կենդանիների համար ստեղծել նախնական կարանտինային պահվածքի հատուկ պահարաններ:

* Կտրուկ փոփոխություններ կատարել բաշխման գործընթացում: Կենդանիները տրամադրել միայն ընտրողաբար և այն տնտեսավարողներին, որտեղ կապահովվեն պահվածքի և տոհմաբուծական աշխատանքների համապատասխան պայմաններ:

* Հատուկ ուշադրություն դարձնել համապատասխան կադրերի վերապարասպմանը: Խորհրդավորական աշխատանքների համար բոլոր մարզերում կազմակերպել սեմինարներ՝ այդ աշխատանքներում ընդգրկելով ոլորտի ճանաչված գիտնականների ու մասնագետների:

* Գույքագրում կատարել այն բոլոր տնտեսություններում, ուր ներկրված կենդանիների սերունդներ կան: Պարզել բաշխման ենթակա նման կենդանիների գլխաքանակը հանրապետությունում և օժանդակել տնտեսավարողներին՝ վերջիններիս վաճառքի գործում:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախորդ տարվա արդյունքներն ամփոփելու և ընթացիկ տարվա գործունեության քննարկումների համար ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը խորհրդակցության էր հրավիրել անասնաբուժական մարզային կառույցների 50-ից ավելի ղեկավար

աշխատողների և մասնագետների: «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գյուղատնտեսական կենդանիների պարվաստում ծրագրի միջոցառումներն արդյունավետ են կազմակերպելու համար, նախարարը հանձնարարել է ծառայություն իրականացնող մարմին՝ հստակեցնել անասնաբույժների գործառույթները, որոշա-

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ՕԺԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՏՐԱՏԱԿԱՄՈՒԹՅԱՄԲ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն օրերս աշխատանքային այցով Շիրակի մարզում էր: Նախարարը մասնակցել է մարզխորհրդի նիստին, անդրադարձել հանրապետության գյուղատնտեսության մեջ նախորդ տարվա ձեռք բերված բարձր արդյունքներին, Շիրակի մարզի ապահոված որոշակի առաջընթացին, ինչպես նաև ընթացիկ տարվա խնդիրներին և առաջնահերթություններին:



Ս. Կարապետյանն անդրադարձել է պետական աջակցության ծրագրերին, նշել, որ հանրապետության նախագահի հանձնարարությամբ, այս տարի նույնպես, գյուղացիական տնտեսությունները մարզելի գներով կստանան սերմացու, պարարտանյութ և դիզելային վառելիք: Շարունակվում է նաև ցածր տոկոսադրույքներով գյուղացիներին վարկավորելու քաղաքականությունը:

Խոսելով «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրով մարզի 9 համայնքներում հիմնադրված արտօգտագործողների սպառողական կոոպերատիվների մասին՝ Սերգո Կարապետյանը նշել է, որ կարճ ժամանակում վերջիններս ապացուցել են իրենց տնտեսական շահավետությունը, ուստի անհապառարկել է նշված ծրագրի շարունակական լինելը: «Առավել մրցունակ ու կայուն անասնապահական համակարգերի կայացման օժանդակելու համար, ընթացիկ տարում նախատեսվում է, խնայված միջոցների հաշվին, Շիրակի մարզի ևս 9 համայնքներ ընդգրկել նշված ծրագրում», - նշել է նախարարը:

Այնուհետև նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար Ս.Կարապետյանը «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սուվետ Մանուկյանին և Բասեն համայնքի ղեկավար Համլետ Պետրոսյանին: Մարզի գյուղատնտեսության մի շարք առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

Նախարարն, օրվա երկրորդ կեսին, մարզպետ Ֆելիքս Յուլյանի հետ, այցելել է Կառնուր համայնքում գտնվող «Գաբյան Մուշեղ» ՍՊԸ-ի անասնապահական համալիր, ուր ծանոթացել է նաև կարֆոֆիլի սերմացուի գրման ու ցանքի նախապարասպանական աշխատանքներին:

Այցելության վերջին կանգառը՝ Բասեն համայնքում գործող արտօգտագործողների կոոպերատիվն էր, որտեղ նախարարը ծանոթացել է պետական աջակցության ծրագրով սրացված գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետությանն ու հնարավորություններին, գրուցել կոոպերատիվի անդամների հետ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔ

Շարունակվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ պետություն-մասնավոր հատված հարաբերությունների հստակեցման և կանոնակարգման գործընթացները, որոնց տնտեսական շահավետությունն արդեն տեսանելի է երկրի ագրարային և վերջինիս առնչվող մյուս համակարգերում:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը խորհրդակցության էր հրավիրել ՀՀ արդյունաբերության զարգացման հիմնադրամի տնօրեն Յ. Միրոյանին, ՀՀ պահածոյագործների և հյուր արտադրողների իրավաբանական անձանց միության գլխավոր տնօրեն Ե. Թարվերդյանին, ՀՀ կաթնամթերք արտադրողների իրավաբանական անձանց միության տնօրեն Ղ. Բունիաթյանին, նշված ոլորտները ներկայացնող մի շարք խոշոր միավորումների ղեկավարների:

Օրակարգում ՀՀ գյուղատնտեսության նախարարության և նշված միությունների միջև համագործակցության հուշագրերի վավերացումն էր:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի պահածոյագործների և հյուր արտադրողների միության միջև, բուսաբուծության և պահածոյագործության բնականոն գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակով, համագործակցության վերաբերյալ և ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Կաթնամթերք արտադրողների միության միջև կաթնամթերքի արտադրության ոլորտի բնականոն գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակով համագործակցության վերաբերյալ հուշագրերը ներկայացվում և վավերացվում են:

Ողջունելով մասնակիցներին կարևոր փաստաթղթերի ստորագրման կապակցությամբ, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ վավերացված հուշագրերն էական դերակատարում են ունենալու՝ ինչպես նշված ոլորտների զարգացման, այնպես էլ՝ պետություն-մասնավոր հատված համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու տեսանկյունից:

Հուշագրերը ստորագրելուց հետո ընկերությունների ղեկավարները ողջունելի համարեցին ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնողականությունը՝ խնդիրների համարել լուծման քաղաքականության ուղղությամբ կատարվող քայլերի համար: Նրանց կարծիքով՝ միություններով աշխատելն անհամեմատ ավելի արդյունավետ է, սակայն, երբ նշված միությունները համագործակցում են նաև համապատասխան նախարարության հետ, այն արդեն նոր որակ է, զարգացման ու առաջընթացի կայուն երաշխիք:

կիություն մտնել նրանց աշխատանքային ծավալների, պարտականությունների և պարասխանաբանության մեջ, ապահովել կանխարգելիչ պարվաստումների ու նմուշառումների իրականացումը՝ համաձայն ժամանակացույցի, բացառելով անասնաբուժաբանակի դուրս մնալը, առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշխատանքային կարգապահության պահպանմանն ու նախատեսված միջոցառում-

ների սահմանված ժամկետներում ու բարձր որակով իրականացմանը:

Ոլորտը համակարգող փոխնախարար Ռոբերտ Մակարյանին հանձնարարվել է աշխատանքները հնարավորինս ակտիվացնելու համար, խորհրդակցություններ անցկացնել բոլոր մարզերում և համայնքներում փրոդ անասնաբուժականության իրավիճակի մասին ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել նախարարին:

ՄՆՆՂԱՄԹԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման համար հիմք է ընդունվել Եվրասիական տնտեսական համագործակցության Մաքսային Միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Մննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 881 որոշումը, որը բխում է Հայաստանի Մաքսային Միությանն անդամակցության իրականացվող պետական քաղաքականությունից:

Մննդամթերքի անվտանգության համակարգի բարելավման նպատակով, սույն որոշումը սահմանվում են՝ Մաքսային Միության պահանջներին համապատասխան սննդամթերքի մասին պարտադիր տեղեկատվության մակնշմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև սննդի շղթայի մակնշման համար պատասխանատու օպերատորների պարտականությունները:

Սույն իրավական ակտի նախագծի մշակումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից:

Սույն որոշման նախագծի ընդունմամբ, սննդամթերքի վերաբերյալ պարտադիր տեղեկատվության մակնշման պահանջները կհամապատասխանեցվեն Մաքսային Միության պահանջներին, կապահովվի սննդամթերքի վերաբերյալ հավաստի, ամբողջական և մատչելի տեղեկատվություն ստանալու սպառողների իրավունքը, ինչպես նաև դա կօժանդակի ոլորտում գործող տնտեսավարողներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն որոշումը հաստատում է՝ սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ)՝ համաձայն N 1 հավելվածի, բաղադրիչների տեսակները, որոնց անվանումները կարելի է փոխարինել սննդամթերքի տեսակների անվանումով՝ համաձայն N 2 հավելվածի, հիմնական սննդամթերքի և էներգիայի միջին օրական պահանջը՝ սննդամթերքի մակնշման համար՝ համաձայն N 3 հավելվածի, սննդամթերքի սննդային և էներգետիկ արժեքների կլորացման կարգերը՝ համաձայն N4 հավելվածի, սննդամթերքի հիմնական սննդանյութերը էներգետիկ արժեքի վերահաշվարկման գործակիցները՝ համաձայն N 5 հավելվածի, սննդամթերքի առանձին առանձնահատկությունների նշման համար սահմանվող պարտադիր պահանջները՝ համաձայն N 6 հավելվածի:

Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը, շուկայահանված կամ մակնշված սննդամթերքը, սննդային հավելումները և սննդային ֆերմենտները, որոնք չեն համապատասխանում սույն որոշման հավելվածով սահմանված պահանջներին, կարող են շուկայահանվել և իրացվել՝ մինչև դրանց պիտանքության կամ պահման նվազագույն ժամկետի լրանալը: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից տասներկու ամիս հետո:

Կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրվող սննդամթերքի վրա՝ դրա մակնշման մասով:

Սննդամթերքը շուկայում շրջանառության մեջ է դրվում՝ դրա մակնշվածքը Հայաստանի Հանրապետության սույն

կանոնակարգին, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական մյուս այն կանոնակարգերին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է սննդամթերքի վրա:

Մակնշման պարտադիր տեղեկատվական ցանկի բաժնում տրված են փաթեթավորված սննդամթերքի մակնշվածքի տվյալները՝ սննդամթերքի անվանումը, սննդամթերքի բաղադրությունը, սննդամթերքի քանակը, սննդամթերքի պարաստման ամսաթիվը, սննդամթերքի պիտանիության ժամկետը, սննդամթերքի պահպանման պայմանները՝ սահմանված արտադրողի կողմից կամ նախատեսված Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով՝ սննդամթերքի առանձին տեսակների համար: Այն սննդամթերքի համար, որի որակն ու անվտանգությունը փոխվում է՝ սննդամթերքը փչանալուց պաշտպանող փաթեթավածքը բացելուց հետո, նշվում է նաև վերջինիս բացելուց հետո պահպանման պայմանները, սննդամթերք արտադրողի անվանումն ու գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտադրողի ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու վայրը (այսուհետ՝ արտադրողի անվանում և գտնվելու վայր), ինչպես նաև՝ սույն կանոնակարգով սահմանված դեպքերում՝ արտադրողի կողմից լիազորված անձի անվանումն ու գտնվելու վայրը և ներմուծող կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը, կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ներմուծողի ազգանունը, անունը, հայրանունն ու գտնվելու վայրը (այսուհետ՝ ներմուծողի անվանում և գտնվելու վայր), սննդամթերքի օգտագործմանը, այդ թվում՝ դրա պարաստմանը վերաբերող ցուցումներ և (կամ) սահմանափակումներ, եթե առանց տվյալ ցուցումների կամ սահմանափակումների, սննդամթերքի օգտագործումը դժվարանում է կամ կարող է վնաս հասցնել սպառողների առողջությանը, նրանց գույքին, հանգեցնել սննդամթերքի համայնի հատկությունների նվազմանը կամ կորստին, սննդամթերքի սննդային արժեքի ցուցանիշները, տվյալներ՝ սննդամթերքում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին (այսուհետ՝ ՉՈԿ), Հայաստանի Հանրապետության շուկայում սննդամթերքի շրջանառության ազգային նշանը:

Տրանսպորտային փաթեթավածքում տեղադրված սննդամթերքի մակնշվածքում կարող են նշվել լրացուցիչ տվյալներ, այդ թվում՝ այն փաստաթղթի մասին, որի համաձայն արտադրվել է կարող է տարբերակվել (նույնացվել) սննդամթերքը, վերջինիս համար մտածված անունը, ապրանքային նշանը, ապրանքային նշանի նկարագրի բացառիկ իրավունքներ ունեցողի մասին տվյալները, սննդամթերքի ծագման վայրի անվանումը, լիցենզիա տրամադրողի անվանումն ու գտնվելու վայրը, կամավոր հավաստագրման համակարգերի նշանները:

Սննդամթերքի առանձին տեսակների համար Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու դեպքում, սննդամթերքի անվանումը պետք է համապատասխանի դրանց պահանջներին: Սննդամթերքի բաղադրության մեջ սննդային հավել-

ման առկայության դեպքում, պետք է նշվի գործառնության (տեխնոլոգիական) նշանակությունը (թթվայնության կարգավորիչ, կայունացուցիչ, էմուլգատոր, գործառնության (տեխնոլոգիական) այլ նշանակություն) և սննդային հավելման անվանումը, որը կարող է փոխարինվել սննդային հավելման ծածկագրով՝ Համարակազմային միջազգային համակարգի (ՀՄՀ) կամ Համարակազմային էվրոպական համակարգի (E) համաձայն: Կանոնակարգում ներկայացված են փաթեթավորված սննդամթերքի քանակը մակնշվածքում նշելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները: Փաթեթավորված սննդամթերքի քանակը նշվում է այդ մթերքի մակնշվածքում ծավալի (միլիլիտրերով, սանտիլիտրերով կամ լիտրերով), զանգվածի (գրամներով կամ կիլոգրամներով) կամ հաշվման միավորներով (հատերով): Ընդ որում, թույլատրվում է կիրառել տվյալ միավորների կրճատված անվանումները: Թույլատրվում է չնշել հատով վաճառվող հավիլիների, մրգերի, բանջարեղենի զանգվածը կամ ծավալը:

Տրանսպորտային փաթեթավածքում տեղադրված սննդամթերքի քանակը նշվում է ծավալի միավորներով (միլիլիտրերով, սանտիլիտրերով կամ լիտրերով), զանգվածի միավորներով (գրամներով կամ կիլոգրամներով) կամ տրանսպորտային փաթեթավածքում եղած փաթեթավորման միավորների քանակով (հատերով)՝ նշելով փաթեթավորման յուրաքանչյուր միավորի մեջ տեղադրված սննդամթերքի քանակը: Ընդ որում, թույլատրվում է կիրառել տվյալ միավորների կրճատված անվանումները:

«Պարաստման ամսաթիվը» բառերից հետո նշվում է սննդամթերքի պարաստման ժամկետը կամ սպառողական ++փաթեթավածքի վրա այդ ամսաթիվը նշելու տեղը: Սննդամթերքի մակնշվածքում «պարաստման ամսաթիվը» բառերը կարող են փոխարինվել «արտադրման ամսաթիվը» կամ իմաստով համանման բառերով: Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում սննդամթերքի առանձին տեսակների համար «պարաստման ամսաթիվը» բառերի փոխարեն, կարող են սահմանվել այլ հասկացություններ, որոնցով որոշվում է սննդամթերքի առանձին տեսակների արտադրության տեխնոլոգիական գործընթացի ավարտի ամսաթիվը, օրինակ՝ խմիչքների շշացման ամսաթիվը, հավիլիների տեսակավորման ամսաթիվը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի տարին, վայրի աճող մրգերի, ընկույզների, մեղվաբուծական մթերքի հավաքի տարին:

Սննդամթերքի պիտանիության ժամկետը նշելու նպատակով կարող է կիրառվել «պիտանի է» բառը՝ նշելով օրերի (24 ժամվա), ամիսների կամ տարիների քանակը կամ մինչև 72 ժամ պիտանիության ժամկետի դեպքում «պիտանի է» բառը՝ նշելով ժամերի քանակը: Արտադրողի կողմից սննդամթերքի մակնշվածքի համար պիտանիության անսահմանափակ ժամկետ սահմանվելու դեպքում, պետք է լրացվի «Պիտանիության ժամկետը սահմանափակված չէ՝ պահպանման պայմաններին հետևելու դեպքում» գրառմամբ: Սննդամթերք արտադրողի անվանումն ու գտնվելու վայրը նշվում է՝ ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված, այնպես էլ՝ երրորդ

երկրներից մատակարարված սննդամթերքի մակնշվածքում: Սննդամթերք արտադրողի գտնվելու վայրը որոշվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վայրով: Արտադրողի հասցեն չհամընկնելու դեպքում, նշվում է նաև արտադրության (արտադրությունների) և այն անձի հասցեն (հասցեները), որին արտադրողը լիազորել է սպառողներից (ձեռք բերողներից) իր տարածքում ներկայացվող պահանջներն ընդունելու համար (եթե կան այդպիսիք):

Սպառողի կողմից պարաստման ենթակա սննդամթերքի սննդային արժեքի ցուցիչների արժեքը նշվում է մակնշվածքի վրա՝ հաշվի չառնելով այդ սննդամթերքի հետագա պարաստումը: Սննդամթերքի սննդային արժեքի ցուցիչների արժեքը սահմանվում է սննդամթերք արտադրողի կողմից՝ վերլուծական կամ հաշվարկային եղանակով:

Սննդամթերքի առանձին առանձնահատկությունների մասին տեղեկություններն, այդ թվում՝ սննդամթերքում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներից կամ դրանց կիրառությամբ ստացված բաղադրիչների բացակայության մասին տեղեկությունները պետք է հաստատվեն ապացույցներով, որոնք ինքնուրույն կամ այլ անձանց միջոցով ստացված տեղեկությունների հիման վրա, ներկայացված են սննդամթերքի մակնշվածքի վրա՝ նման հայտարարություն կատարող անձի կողմից: Սննդամթերքի առանձին առանձնահատկությունների առկայության ապացույցները պետք է պահվեն կազմակերպություններում կամ անհատ ձեռնարկատերերի մոտ, որոնք շրջանառության մեջ են դնում նման սննդամթերքը Հայաստանի Հանրապետության տարածքում և պետք է ներկայացվեն այն դեպքերում, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սննդամթերք արտադրելիս, արտադրողի կողմից գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ չօգտագործելու դեպքում, սննդամթերքում 0,9 տոկոս և պակաս քանակությամբ ՉՁՕ-ն համարվում է պատասխան կամ տեխնիկապես անհնար վերացվող խառնուրդ, և նման սննդամթերքը չի համարվում ՉՁՕ պարունակող սննդամթերք: Նման սննդամթերքի մակնշվածքի ժամանակ ՉՁՕ-ի առկայության մասին տեղեկություններ չեն նշվում:

Մանրածախ առևտրի կազմակերպությունների կողմից, սպառողի բացակայության պայմաններում, սննդամթերքի նախնական փաթեթավորման դեպքում, սպառողական փաթեթավածքի կամ վերջինիս պիտանի վրա պետք է նշվեն սննդամթերքի անվանումը, դրա պարաստման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և պահպանման պայմանները:

Սննդամթերքի մակնշվածքի համապատասխանեցումը սույն կանոնակարգին ապահովվում է անմիջականորեն մակնշվածքի պահանջների, ինչպես նաև կատարմամբ և սննդամթերքի մակնշվածքի նկարագրի լրացուցիչ պահանջներ սահմանող ՀՀ-ում գործող սննդամթերքի առանձին տեսակների համար տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ:

Հաշվի առնելով, որ նախագծում սահմանված չեն դրույթներ՝ օրգանական սննդամթերքի մակնշման վերաբերյալ, ուստի նախագծում հղում է կատարվել ՀՀ կառավարության 11.06.2009թ. N 662-Ն որոշմանը:

ՓՈՒՆԴԱԿԱՆ ԿԱՊ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՑԱՆՑ

«Յեյֆեր Հայաստան» և իր գործընկերը՝ Վրաստանի «Համաձայնություն» կա-
նանց ասոցիացիան, վերջերս Թբիլիսիում, Եվրոպական Միության կողմից ֆինան-
սավորվող «Երիտասարդները հանուն փարածաշրջանում փոխադարձ կապի պահ-
պանման և համագործակցության» ծրագրի շրջանակներում, կազմակերպել էին
Տարածաշրջանային երիտասարդական համաժողով: Համաժողովին մասնակցում
էին երիտասարդների պարզապարզություններ վերջը նշված ծրագրում ընդգրկված
չորս գործընկեր երկրներից՝ Հայաստանից, Վրաստանից, Թուրքիայից և Բուլղա-
րիայից:



Հայաստանը ներկայացրել են Շուշան Գրիգորյանը, Անդրանիկ Խանդանյանը, Ան-
նա Կարապետյանն ու Շողեր Հարությունյանը: «Յեյֆեր Հայաստան»-ի փնթեյն փրկին Ա.
Ղազարյանը նշեց, որ գործընկեր երկրների երիտասարդները հավաքվել են՝ ստեղծելու
Սևծովյան ավազանի Տարածաշրջանային երիտասարդական ցանց (ՏԵՏ)՝ փարածաշր-
ջանի մակարդակով համագործակցությունը զարգացնելու նպատակով: Երիտասարդա-
կան պարզապարզությունների ներկայացուցիչները մասնակցել են նաև ծրագրի կայք էջի
պաշտոնական բացմանը: Կայք էջը ծառայելու է՝ որպես առցանց դաշտ, որտեղ Սևծովյան
ավազանի երիտասարդական ակումբների և կենտրոնների անդամները հնարավորություն
կունենան խնդիրներ վեր հանել և կազմակերպել առցանց բանավեճ և քննարկումներ, միմ-
յանց տեղեկացնել և ներգրավել իրենց գործունեության մեջ, նաև կազմակերպել համարեղ
մշակութային միջոցառումներ: Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ աջակցել փարածաշր-
ջանում ընդհանուր արժեքների և Եվրոպայի հարուստ մշակութային բազմազանությանը
համախոհ և այն գնահատող մշակութային միջավայրի շուրջը համագործակցության և
գործընկերության հաստատմանը: Ծրագիրը սկսվել է 2013թ. մայիսին և կրկի 12 ամիս:

Ծրագրի շրջանակներում, երիտասարդական համաժողովի ընթացքում, ուսուցում ստա-
ցած երիտասարդներից ընտրվել է երիտասարդական ցանցի համակարգող խորհուրդ, որը
մշակելու է ՏԵՏ-ի ռազմավարությունը և գործողությունների պլան՝ Սևծովյան ավազա-
նի երիտասարդական ցանցը և ծրագրի ավարտից հետո առցանց դաշտի աշխատանքները
նախաձեռնելու և ակտիվորեն համակարգելու նպատակով: Խորհրդի կազմում ընդգրկված
երիտասարդները չորս գործընկեր երկրների ներկայացուցիչներ են:

Համաժողովին մասնակցել են նաև ներկայացուցիչներ Վրաստանի սպորտի և երիտա-
սարդության հարցերի նախարարությունից:

Լիանա Շախնազարյան

ԷԿՈՏՈՒՐԻԶՄ

ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Օրերս Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը, Հայաս-
տանի ազգային մրցունակության հիմնադրամը (ՀԱՄՀ) և Կովկասի բնության հիմնադրա-
մը (ԿԲՀ) ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, համաձայն որի՝ կողմերը սկսելու են
ռազմավարական համագործակցություն՝ Հայաստանի Հանրապետությունում էկոտուրիզ-
մը բնության հարուստ պահպանվող փարածաշրջանում և այդ փարածաշրջանի հարակից հա-
մայններում զարգացնելու նպատակով: Մինչև հուշագրի ստորագրելը, ներկաներին ողջու-
նեց ՀՀ բնապահպանության փոխնախարար Խ. Հակոբյանը: Փոխնախարարը կարևորեց
հարուստ պահպանվող փարածաշրջանի նշանակությունն ու անհրաժեշտությունը: Ըստ նրա՝
համայնքներում բնական ռեսուրսների պահպանումը հնարավորություն կտա մեր փարա-
ծաշրջանում զարգացնել էկոտուրիզմը՝ միաժամանակ լուծելով հարակից համայնքների
ներգրավվածությունը աշխատանքներին:

Հուշագիրը ստորագրեցին WWF հայաստանյան մասնաճյուղի փնթեյն Կարեն Մանվել-
յանը, ՀԱՄՀ գործադիր փնթեյն Արման Խաչատրյանը և Կովկասի բնության հիմնադրամի
գործադիր փնթեյն Դեյվիդ Մորիսոնը:

Հուշագրի համաձայն՝ մասնակից կողմերը համարեղ կմշակեն և կիրականացնեն ծրագ-
րեր՝ էկոտուրիզմի զարգացումը խթանելու և դեպի բնության հարուստ պահպանվող փա-
րածաշրջան և հարակից համայնքներ ներգրավումների հոսք ուղղորդելու ուղղությամբ:

Լիանա Շախնազարյան

ԳՅՈՒՂՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՓՈՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԸ

Գյուղատնտեսական դաշինքը հրավիրում է բանկերի և ֆերմերների ուշադրությունը

Գյուղատնտեսության վարկավորումը Հայաստանի Հանրապետությու-
նում շարունակում է մնալ գյուղատնտեսության զարգացման գործում
որքան կարևոր, նույնքան էլ խոցելի ոլորտներից մեկը: Խնդիրը, ընդհա-
նուր առմամբ, ոչ միայն փոկոսադրույքների անհարկի բարձր լինելն է
(կառավարության փրամադրած սուբսիդավորումից փոքրաթիվ ֆերմեր-
ներ են օգտվում), որքան՝ վարկառուների անտեղյակությունը փարեկան
անվանական և փաստացի փոկոսադրույքների էական փարբերության
մասին (անշուշտ՝ ի վնաս վարկառուի):



Հարցը վերջերս քննության առարկա դարձավ Գյուղատնտեսական դաշին-
քի հերթական հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ ԳԳ հիմնադիր ան-
դամ կազմակերպություններից մեկում՝ «Ագրոբիզնեսի հեթազոտությունների և
կրթության միջազգային կենտրոն (ԱՀԿՄԿ)» հիմնադրամում: Զեկուցող, ԱՀԿՄԿ
փնթեյն Վարդան Ուռուպյանը նշեց, որ «Բանկերի և վարկային կազմակերպու-
թյունների մեծ մասը, խուսափելով թափանցիկ գործելակերպից, վարկառու ֆերմե-
րի հետ իր աշխատանքում օգտագործում է զուտ «ինքնաբավ» գործիքներ, դրա-
նով իսկ նպաստելով ոչ պարասիտանափու ֆինանսավորման արմատավորմանը,
ըստ էության, ֆերմերից թաքցնելով փրամադրվող վարկի փաստացի փարեկան
փոկոսադրույքը»:

Վարկառուն իրականում չի պարկերացնում, թե ինչ է արժենում որպես վարկ
վերցվող գումարը, քանի որ վարկային պայմանագրում նշվում է միայն անվանա-
կան փոկոսադրույքը: «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը վար-
կարուին պարտադրում է վարկային պայմանագրում նշել ոչ միայն անվանական,
այլև փարեկան փաստացի փոկոսադրույքը, մինչդեռ գյուղատնտեսական վար-
կավորման պարագայում նման պարտադրանք չկա: Օգտվելով այս հանգաման-
քից՝ բանկերն ու վարկային կազմակերպությունները, փաստորեն, մոլորեցնում
են գյուղացուն, քանզի գյուղացին չի պարկերացնում թե, օրինակ, փոկոսագու-
մարների վճարման հաճախականությունը, վարկի փրամադրման և սպասարկման
համար գանձվող աստիճանական գումարներն իրականում ինչ ազդեցություն
են ունենում փարեկան փաստացի փոկոսադրույքի վրա:

Առհասարակ, ֆինանսական գրագիտության առումով, իրավիճակը գյուղա-
կան համայնքներում անհուսալիորեն միտհոգի է: Այս մասին են վկայում 2013թ.-
ին ԱՀԿՄԿ հիմնադրամի՝ 6 մարզերի ավելի քան 50 համայնքներում բնակվող
1000 ֆերմերների շրջանում անցկացրած ֆինանսական գրագիտության թեմա-
յով սեմինարների արդյունքները:

Գյուղատնտեսական դաշինքը հավանություն փվեց գյուղատնտեսական վար-
կավորման փաստացի փոկոսադրույքը վարկային պայմանագրերում պարտադիր
կերպով նշելու վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու, այս ուղղությամբ
իրագրված արշավ սկսելու, ինչպես նաև, Կենտրոնական բանկում և Ազգային
Ժողովում լոբիզային աշխատանք իրականացնելու՝ ԱՀԿՄԿ-ի առաջարկին: Դա-
շինքի անդամ կազմակերպությունները համարում են, որ բանկային հատվածի,
վարկառու ֆերմերների, առհասարակ գյուղատնտեսական ամբողջ հանրության
և շահագրգիռ այլ կողմերի շրջանում պարզաճ իրագրված հնարավոր կլինի
բոլոր կողմերին հասցնել ուղերձի կարևորությունը, մասնավոր՝ հաշվի առնելով
մեր երկրում գյուղատնտեսության՝ պարականորեն հաստատված գերակա նշա-
նակությունը:

Դաշինքը ողջունում է գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող այն
ֆինանսական կազմակերպություններին, որոնք որդեգրել են պարասիտանա-
փու ֆինանսների սկզբունքները և թափանցիկ գործելակերպը և հույս հայտ-
նում, որ վերոնշյալ միջոցառումները, մասնավորապես, վարկային պայմանագ-
րերում գյուղատնտեսական վարկերի փաստացի փոկոսադրույքի առկայությունն
օրենսդրորեն ամրագրելը, թափանցիկ գործելակերպ կպարտադրի բոլոր բանկե-
րին և վարկային կազմակերպություններին: Սա ոչ միայն կարևորվում է պարասի-
տանափու և թափանցիկ վարկային արտադրանքից օգտվելու՝ ֆերմերի իրա-
վունքի փեսակերպից, այլև առհասարակ ոլորտի զարգացման հրամայականներից
մեկն է: «Իր համար կարևոր որոշում կայացնելիս, ֆերմերը պետք է հիմնվի ոչ թե
աչքաչափի, այլ պայմանագրում ամրագրված կոնկրետ թվերի վրա», - նշում է Վ.
Ուռուպյանը:

Գյուղատնտեսական դաշինքի անդամ կազմակերպությունների հանդիպման
մասնակիցներն ակնկալում են նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության
աջակցությունը, որի հետ հեռանկարային գործակցություն է սկսվել:

Հանդիպման ժամանակ ԳԳ անդամ 15 կազմակերպությունների ներկայացու-
ցիչները ստորագրեցին ԳԳ փոխըմբռնման հուշագրի թարմացված փարբերակը:

Սոս Ավետիսյան

ԱՀԿՄԿ հիմնադրամի հանրային կապերի մասնագետ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաղողի այգիներում գարնանային մշակության հիմնական աշխատանքներից են՝ այգեբացը, շալալերի վերանորոգումը, բաց տեղերի լրացումը, վազերի էրն ու ձևավորումը, այգու միջաբերքից արքադի հեռացումը, չոր կապը, հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը, պայքարը հիվանդությունների և վնասատուների դեմ, առաջին շվապումը, սնուցումը, կանաչ կապը և այլն:

Այգեթաղ կապարող խաղողագործական շրջաններում խնամքի աշխատանքները սկսվում են այգեբացից: Այգեբաց կապարելիս, անհրաժեշտ է վազի վրայից հողը զգուշությամբ հեռացնել այնպես, որ վազերի օրգանների հետ շփվող գործիքները չվնասեն թևերին, մարտերին և աչքերին: Դրանից հետո, մակերեսային արմատները հեռացնելու համար թափված հողը հավասարաչափ փռում են միջաբերքի տարածություններում՝ վազերի բունը բացելով 10-15 սմ խորությամբ:

Բազմամյա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արարաբյան հարթավայրի այգիները կարելի է բացել մարտի առաջին, իսկ նախալեռնային գոտում՝ երկրորդ կամ երրորդ փամփուրջից:

Այգեբացն անհրաժեշտ է սկսել նախ՝ հարավային լանջերից, այնուհետև՝ հարթավայրերում և ցածրադիր մասերում հիմնադրված այգիներից: Սեղմ ժամկետներում պետք է վերջացնել այգեբացի և շալալերի վերանորոգման աշխատանքները, որպեսզի վազերի էրն ու չոր կապն ավարտվեն մինչև աչքերի ուռչելը:

Վազերի էրն այգու մշակության շատ կարևոր և բարդ ագրոտեխնիկական միջոցառումներից է, որի հիմնական նպատակն է՝ կանոնավորել վազի փայլ և հեղուկության բնական աճը: Էրն միջոցով վազին տրվում է որոշակի ձև (համապատասխան փայլ վայրում ընդունված ձևավորման համակարգին), որը հեշտացնում է այգում կապարվող աշխատանքների մեքենայացումը:

Խաղողի վազի էրն իրականացվում է նրանում, որ ամեն փարի հեռացվում են միամյա մարտերի և բազմամյա ճյուղերի որոշ մասերը՝ վազի վրա թողնելով անհրաժեշտ քանակությամբ միամյա մարտեր: Այնուհետև դրանցից յուրաքանչյուրն էրվում է որոշակի երկարությամբ, որով և կանոնավորվում է թփի բեռնվածությունը:

Էրն ժամանակ կազմվում են որոշակի քանակությամբ բերքի օղակներ: Բերքի օղակը կազմված է լինում մեկ փոխարինողից և մեկ կամ մի քանի բերքատու մարտերից: Սովորաբար, բերքի օղակը կազմվում է նախորդ տարվա փոխարինողի վրա:

Վազերն էրելիս, պետք է հեռացնել խիստ ձգված, վնասված, թուլացած թևերը, ենթաթևերը, որոնց փոխարեն բնի մոտ գտնվող մարտերից կամ հոռամարտերից կազմավորել շարքից դուրս եկող թևերին և այլ մասերին փոխարինողներ, վազերին հարկացված ազատ տարածությունը զբաղեցնել և անդալիսի միջոցով վերացնել այգու նստությունը:

Էրը հաջող կապարելու, և էրված վազերից բարձր բերք ստանալու համար կարևոր նշանակություն ունի կապարման ժամանակը, որը հիմնականում կախված է փայլ շրջանի հողակլիմայական պայմաններից: Այգեթաղ չկապարող խաղողագործական շրջաններում, որտեղ ձմեռը մեղմ է, վազերը կարելի է էրել աշնանը՝ տեղաթափից 15-20 օր անց, գարնանը, երբեմն էլ՝ ձմռանը: Ձմռան ընթացքում վազերը պետք է էրել, երբ ջերմաստիճանը 0-ից բարձր է, իսկ ցածր լինելու դեպքում չպետք է էրել, որովհետև սառած մարտերը մկրատի ճնշման փակ ճաքճքում են և հեշտությամբ ցրտահարվում: Ձմռանը միամյա մարտերը մեկից երկու աչքով ավելի երկար պետք է էրել: Այգեթաղ կապարող խաղողագործական շրջաններում էրը հարկավոր է կապարել գարնանը և վերջացնել մինչև աչքերի ուռչելը:

Վազի բեռնվածությունն՝ էրն ժամանակ դրա վրա թողնված աչքերի, իսկ շվապումից հետո՝ շվերի և ծաղկաբույլերի քանակն է: Վազի բեռնվածության չափը կախված է հողակլիմայական պայմաններից, մշակվող սորտերի կենսաբանական առանձնահատկություններից, կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումներից, բնույթից, պլանավորվող բերքից, վազերի վիճակից: Արարաբյան հարթավայրի և նրա նախալեռնային շրջանների խաղողի այգիներում մեկ հեկտարի բեռնվածությունը պետք է կազմի 150-250 հազար, իսկ հյուսիսարևելյան գոտում՝ 80-160 հազար աչք:

Արարաբյան հարթավայրի և նրա նախալեռնային գոտու շրջաններում, 2,5 x 1,5 մ խորությամբ տնկված շալալերային այգիներում, Մսխալի, Արարաբի, Շահումյանի, Դեղին Երևանի և նման սորտերի վազերն էրելիս, թողնել 80-120, Ոսկեհայր, Գառան Դմակ, Ճիլար, Անահիտ, Ութաճիթելի, Արենի և նման սորտերի վրա՝ 60-100 աչք, իսկ Կախեթ, Նազելի, Յաղթանակ, Կարմրահյուսի և նման սորտերի վրա՝ 40-60 աչք:

Հյուսիս-արևելյան շրջաններում 2,0 x 1,25 մ խորությամբ տնկված այգիների յուրաքանչյուր վազի վրա պետք է թողնել հեկտար բեռնվածությունը՝ Ութաճիթելի, Կաբենե, Սափերալի, Ջրջրուկ, Կարմրահյուսի սորտերինը՝ 40-50 աչք, Լավարի, Բանանց, Բուլար, Կարդինալ սորտերինը՝ 55-65 աչք, իսկ Ալիգոսթ, Պինո սև և նման թույլ աճեցողությամբ սորտերի վրա՝ 20-30 աչք:

Մեղրու շրջանում, խիտ տնկված այգիներում (1,5 x 1,0 մ), Արևիկ և Արարա սորտերի յուրաքանչյուր վազի վրա պետք է թողնել 3-4 մարտ՝ էրելով 8-10 աչք երկարությամբ, այն հաշվով, որ բեռնվածությունը կազմի 30-40 աչք:

Էրն երկարությունը վազերի աճի և բերքատվության կարգավորման հիմնական ագրոմիջոցառումներից է: Արարաբյան մեջ կիրառվում են էրն երկարության հեկտար ձևերը՝ կարճ էր, երբ մարտի վրա թողնում են 1-4 աչք, միջակ էր՝ 7-10 աչք, երկար էր՝ 12 և ավելի աչք:

Գոյություն ունի նաև խառը էր, երբ վազի վրա թողնվող մարտերի մի մասն էրվում է կարճ, մյուս մասը՝ միջակ, մնացածը՝ երկար: Համեմատաբար լայն կիրառում ունի խառը էրը: Կարճ էր կիրառվում է գլխավորապես ֆիլոքսերադիմացկուն մայրակների վազերն էրելիս: Բուլար փայի ձևավորումների ժամանակ փոխարինող մարտերը ևս կարճ են էրվում (2-3 աչք):

6

ԾԱՂԿԱՍԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾԱՂԿԱՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի բոլոր երկրներում, բոլոր ժողովուրդների համար ծաղիկը գեղեցկության խորհրդանիշ է: Մշակվող բազմաթիվ ծաղկաբույսերի շարքում մեխակը, վարդը և հերբերան զբաղեցնում են հատուկ տեղ: Զերմասեր լինելու պարճառով այս ծաղկաբույսերը մշակվում են հիմնականում ջերմասերային պայմաններում:



Արտաքին գործունեության ազդեցությունը ծաղիկների աճի և զարգացման վրա:

Լույս: Ամենակարևոր գործոնն է, որը որոշիչ է բույսի աճի ու զարգացման համար: Մեխակը համարվում է երկար օրվա բույս: Օրվա երկարությունը և գիշերվա համեմատաբար ցածր ջերմաստիճանը նպաստում են ծաղիկների կազմավորմանը: Լույսի թույլ ինտենսիվության պայմաններում տերևների կազմավորման ընթացքը ձգձգվում է, իսկ ծաղիկներինը՝ դադարում: Ծաղիկների աճի և զարգացման համար պահանջվում է լավագույնը 15 հազար և նվազագույնը՝ 4 հազար լյուքս լուսավորություն:

Մեր հանրապետության ջերմասերներում ծաղիկների, մասնավորապես՝ մեխակի, վարդի և հերբերայի մշակության ընթացքում կա երկու անբարենպաստ շրջան: Նախ՝ ամռանը ջերմասերներում (հարկապես՝ անգարային փայի) ինտենսիվ լուսավորության և երկար օրվա

տևողության առկայությունը պահանջում է կիրառել արհեստական սրվերացում: Ինտենսիվ լուսավորությունը բացասաբար է ազդում երիտասարդ բույսերի վրա: Երկրորդը՝ ձմռանը, լուսավորության ցածր ինտենսիվության պայմաններում, բույսի բնականոն ծաղկման համար հաճախ անհրաժեշտ է լինում օգտագործել լրացուցիչ լուսավորություն:

Զերմություն: Ծաղիկների աճի ու զարգացման համար մեծ նշանակություն ունի օդի և հողի ջերմաստիճանը: Պետք է գիտենալ, որ բույսերի վեգետացիան ջերմաստիճանում անցնում է օդի ջերմաստիճանի զգալի փոփոխումների պայմաններում: Ոչ փակաս ժամանակով մեխակը կարող է դիմանալ նաև բացասական ջերմաստիճանի: Մեխակի համար լավագույնը համարվում է 18-20°C ջերմաստիճանը: Ձմռանը ջերմաստիճանն անհրաժեշտ է ցերեկը պահել՝ 12-14, գիշերը՝ 10-12°C, գարնանն ու աշնանը՝ 16-18 և 14-16°C ջերմաստիճանի սահմաններում:

նի սահմաններում: Վարդի համար լավագույն ջերմաստիճանը 15-25°C է: Հերբերայինը՝ ամռանը, արևոտ եղանակին՝ 18-20°C, իսկ ձմռանը՝ 24-25°C ջերմաստիճանը:

Բարձր ջերմաստիճանը, զուգակցվելով օդի հարաբերական բարձր խոնավության հետ, նպաստում է սնկային և վիրուսային հիվանդությունների զարգացմանն ու տարածմանը: Մեխակի համար շատ վրանգավոր են ցերեկվա և գիշերվա ընթացքում ջերմաստիճանի կտրուկ փոփոխումները, հարկապես՝ գարնանը: Նման պայմաններում կորած ծաղիկների 50-70 փոկոսն ունի պայթած բաժակաթերթիկներ: Գարնանը նույն ազդեցությունն են թողնում նաև լույսի ինտենսիվության կտրուկ փոփոխումները:

Ծաղիկների մշակության ժամանակ հողի ջերմաստիճանն անհրաժեշտ է պահել 18-20°C սահմաններում:

Չորի և օդի խոնավությունը: Մեխակը խոնավասեր մշակաբույս է, սակայն չափից ավելի խոնավությունը, հարկապես՝ աշնան-ձմռան շրջանում, նպաստում է հիվանդությունների արագ տարածմանը, վարթարացում հողագրունտի օդային ռեժիմը և դժվարացնում արմատային համակարգի աճը: Այդ պարճառով առաջարկվում են հաճախակի, բայց ոչ առաք ջրումները: Մեր պայմաններում մեխակն ամռանն ընդունված է ջրել շաբաթը 2-3, անձրևոտ և ամպամած օրերին՝ շաբաթը 1 անգամ: Ձմռանը և աշնանը խիստ կրճատվում է ոռոգումների հաճախականությունը՝ ամիսը 2-3 անգամ: Ամռանը մեխակի համար հողի լավագույն խոնավությունը համարվում է սահմանային խոնավության 75-80 փոկոսը, իսկ հերբերայինը՝ 70 փոկոսը, որը աշնան-ձմռանային շրջանում համապատասխանաբար կազմում է՝ 70 և 60 փոկոս: Օդի հարաբերական խոնավության լավագույն նորման համարվում է 60-70 փոկոսը, իսկ դրա հեղուկա իջեցումը նպաստում է բույսի արդյունավետ ճյուղավորության գործակցի՝ փոխարինող ընձյուղների քանակի նվազմանը: Ցածր ջերմաստիճանների դեպքում, սնկային հարուցիչներից զերծ պահելու նպատակով, օդի հարաբերական խոնավությունն անհրաժեշտ է պահել 50-60 փոկոսի սահմաններում:

5\$ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կարճ, միջակ և խառը էրը կիրառվում է թմբային այգիներում: Այդ դեպքում, վազի բնի վրա, փարբեր ուղղությամբ դասավորված թևերի կամ ենթաթևերի վրա պեղք է թողնել 2-4 մապ՝ յուրաքանչյուրն էրելով 4-7 աչքով: Նազելին, Կախեթը և սրանց նման աճեցողություն ունեցող սորտերն անհրաժեշտ է էրել 4-5 աչքով, Ոսկեհարը՝ 5-6, իսկ Արարարի, Մսխալի, Կարմիր կախանի, Դեղին Երևանի, Վարդագույն Երևանի և այս կարգի մյուս սորտերը՝ 5-7 աչքով:

Բոլոր դեպքերում ծայրամասում գրվող կամ ուժեղ մաքր պեղք է էրել 1-2 աչքով ավելի երկար, քան՝ ներքևի մասում գրվող կամ թույլ մաքր:

Շալաերայի վրա բարձրացված այգիներում էրը պեղք է կապարել համեմատաբար երկար՝ բերքատու մապի և փոխարինողի սկզբունքով: Ուժեղ աճեցողություն ունեցող սորտերի (Արարարի, Դեղին Երևանի, Թավրիզենի, Մսխալի և այլն) բերքատու մաքրը պեղք է էրել 10-12 աչքով, իսկ թույլ աճեցողություն ունեցող սորտերինը (Նազելի, Կախեթ, Ալիգուրե)՝ 6-8 աչքով:

Լավ զարգացած վազերի բարձր բեռնվածությունն ապահովելու համար, յուրաքանչյուր բերքի օղակի վրա, մեկի փոխարեն, կարելի է թողնել երկու, իսկ առանձին դեպքերում նաև՝ երեք բերքատու մապ և մեկ փոխարինող:

Էրելիս, անհրաժեշտ է հեղուկել, որ վազի վրա որքան հնարավոր է քիչ և փոքր վերքեր առաջանան, և դրանք իրարից հեռու լինեն: Վազերի վրա կործանվածները պեղք է կապարել սրված այգեգործական մկրատով և սղոցով: Վազի բազմամյա մասերի վրա կործանվածներ կապարելիս, պեղք է աշխատել, որ դրանք լինեն վազի պսակի ներսի կողմից, էլ ման կեպից 2-3 սմ բարձր:

Էրը և արքադի փեղափոխումը վերջացնելուց հետո պեղք է սկսել չոր կապը: Վազի թևերը, ենթաթևերը և բերքատու մաքրը կապել առաջին և երկրորդ հարկ լարերից: Անկախ ձևավորման համակարգից, շալաերային այգիներում վազերի բերքատու մաքրը լարերին կապել աղեղնաձև, երբեմն՝ հորիզոնական դիրքով: Չոր կապի լավագույն ժամկետը համարվում է հյուսիսային սկզբից մինչև աչքերի ուռչելը, քանի որ այդ շրջանում մաքրն ավելի ճկուն են լինում և, առանց ջարդվելու, հեշտությամբ կորանում են: Չոր կապի ժամանակ թևերը, ենթաթևերը և բերքատու մաքրն այնպես պեղք է դասավորել, որ շալաերայի հարթության վրա հավասարաչափ փեղավորվեն և խորացումներ չլինեն: Վազերի չոր կապի համար օգտագործում են թել, սինթետիկ կապանյութեր և այլն: Կապն ուժեղ չձգել, քանի որ աճեցողության ընթացքում բազմամյա ճյուղավորումներն ու

միամյա մաքրերը հաստանում են, կապի նեղ օղակի մասից ձևափոխվում և հեշտությամբ կործանվում: Այդ պարագանով՝ կապը հարկավոր է կապարել միայն ութաձև և փոքր-ինչ ազար: Թմբային այգիներում չոր և կանաչ կապ չեն կապարում, այլ վազերը նեցուկավորում են:

Չոր կապից հետո այգիների միջջարքային փարածությունները պեղք է վարել 20-25 սմ, իսկ միջվազայինը՝ փորել 18-20 սմ խորությամբ:

Հանքային և օրգանական պարարտանյութերը հող են մտցվում 2-3 ակոսներով՝ 25-30 սմ խորությամբ: Ամեն փարի, հեկտարի հաշվով, պեղք է փայլ 100-120 կգ ազոտ, 110-120 կգ ֆոսֆոր և 80-100 կգ կալիում (ազոտը նյութի հաշվով): Օրգանական պարարտանյութերով պարարտացնելիս, հեկտարին պեղք է փայլ 30-40 փ կիսափորած գոմաղբ կամ 4-6 փ կիսափորած թռչնաղբ՝ երեք փարվա հաշվով:

Թմբային այգիներում, որպեսզի հողի մշակությունը կապարվում է ձեռքով, այգեփորը պեղք է կապարել 25-27 սմ խորությամբ: Թմբային այգիները պարարտացնելիս, անհրաժեշտ է գարնանը վազից 50-60 սմ հեռավորության վրա բացել 30-35 սմ խորությամբ 4-5 փոս, դրանց մեջ լցնել պարարտանյութերի խառնուրդը և հողով ծածկել: Հողի մշակումից և պարարտացումից հետո այգին խնամքով ջրել և ավարտել մինչև աչքերի ուռչելը:

Մայիս ամսին, ծաղկումից 15-20 օր առաջ, փրվում է առաջին սնուցումը, ազոտ՝ 30-35 կգ, ֆոսֆոր՝ 20-25 կգ, կալիում՝ 15-20 կգ (ազոտը նյութի հաշվով):

Ծաղկումից առաջ, երբ շվերն ունենում են 10-12 -սմ երկարություն և դրանց վրա նկատվել են ծաղկափթույթներ, պեղք է կապարել առաջին շվափումը:

Արարարային հարթավայրում և դրա նախալեռնային գոտում շվափումը կապարվում է մոտավորապես մայիսի առաջին, իսկ Յուսիս-արևելյան գոտում՝ մայիսի 2-րդ կեսին:

Շալաերային այգիներում, անկախ վազին փրված ձևավորման համակարգից, շվերն, աճմանը զուգընթաց, պեղք է կապել լարերից: Սովորաբար, վեգետացիայի ընթացքում, կանաչ շվերը կապում են 2-3 անգամ: Առաջին կապը կապարում են ծաղկումից առաջ, երբ շվերն անցնում են երկրորդ հարկ լարից: Սա մոտավորապես համընկնում է մայիսի վերջին օրերի հետ: Կանաչ շվերը պեղք է կապել ութաձև, առանձին-առանձին, ուղղահայաց դիրքով՝ հավասարաչափ դասավորելով շալաերայի հարթության վրա:

Գագիկ Մեյան
Խաղողապրդագինեգործության գիտական կենտրոն

ԱԶԱԿՅՈՒԹ-ՅՈՒՆ

Շարունակվում է համագործակցությունը

«Վորլդ Վիժն» ՄԲԿ, Թալինի ՏԶԾ-ում ընդգրկված համայնքներում, շահառուների կարողությունների հզորացման նպատակով, «Գյուղատնտեսության արտադրության արդյունավետության բարձրացում» թեմայով դասընթացների կազմակերպման և իրականացման համար պարասխանատու կազմակերպություն է ընտրել Արագածոտնի ԳԱՄԿ-ը:

Բնակչության շրջանում պարբերաբար իրականացվող աջակցության և աշխատանքի ժամանակ ակնհայտ է դարձել, որ շար դեպքերում և՛ հողօգտագործողների, և՛ անասնապահների մեծ մասը շարունակաբար շար դեպքերում օգտագործում է հողօգտագործման, կենդանիների կերակրման, պահվածքի սխալ տեխնոլոգիաներ, նաև արտադրողականությունը սպառած ռեսուրսներ:

Այդ առումով, խիստ կարևոր է բնակչության լայն, հարկապես անապահով խմբին իրազեկել անասնապահության՝ ինչպես փորձված, այնպես էլ նոր տեխնոլոգիաների մասին, որոնք թույլ կտան՝ փոքր ներդրումների և աշխատանքային նոր ձևերի ներդրման հաշվին, բարելավել գյուղատնտեսության արտադրության արդյունավետությունն ու արտադրանքի որակական հարկանիշները:

Արագածոտնի ԳԱՄԿ-ն, ունենալով 15 փարվա աշխատանքային փորձ՝ վերլուծական, հետազոտական և համապարասխան դասընթացների կազմակերպման ու իրականացման գործում, ինչպես նաև՝ խորհրդատվական նյութերի հարուստ բազա և նմանօրինակ ծրագրերի մշակման բազմամյա փորձ, «Գյուղատնտեսության արտադրության արդյունավետության բարձրացում» թեմայով դասընթացների համար փայագրել է «Գյուղատնտեսության արտադրության արդյունավետության բարձրացում» և «Արդյունավետ անասնապահության և բուսաբուծության վարում» խորհրդատվական գրքույկներ:

Կազմվել է «Վորլդ Վիժն» Թալինի ՏԶԾ-ի հետ համաձայնեցվել է դասընթացների անցկացման ժամանակացույցը, ըստ որի՝ 2014թ.-ի փետրվարին կազմակերպվել է անցկացվել է 8 դասընթաց, որից՝ 4-ը՝ «Արդյունավետ բուսաբուծության վարում», իսկ մյուս 4-ը՝ «Արդյունավետ անասնապահության վարում» թեմաներով:

Դասընթացներն անցկացվել են Թալին քաղաքում, Ն. Սասնաշեն, Ցամաքասար և Արտենի համայնքներում: Դրանց մասնակցել են նշված համայնքների և նրանց կից գյուղերի այն ֆերմերները, որոնք ընդգրկված են «ԱԿԵ» Գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպության առաջարկվող ցուցակում և «Վորլդ Վիժն» Թալինի ՏԶԾ-ի կողմից փրված ցուցակում:

Սոս Հարոյան
Արագածոտնի ԳԱՄԿ-ի խորհրդատու

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՄԻՋԱՏՆԵՐԸ՝ ՍՆՆԴԱԿԱՐԳՈՒՄ

Վերջերս Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը հրապարակել է իր «Ուրելի միջատներ. պարենային անվտանգության հեռանկարները» գեկույցը, որտեղ ներկայացված են շրջակա միջավայրի և մարդու առողջության համար այն առավելությունները, որոնք սպասվում են միջատներից պարարտացված սննդային հավելումների օգտագործման դեպքում: Նաև թվարկվում և նկարագրվում են այն 7 միջատները, որոնց, հեղինակավոր կազմակերպության համոզմամբ, շուրջով հանդիպելու ենք մեր ճաշացանկում:

1. Մոպանե թրթուր. կայսերական ցեցի (Imbrasia belina) թրթուրային փուլում գրվող առանձնյակ, որ փարածված է Աֆրիկայի հարավում: Եփում են աղաջրում, ապա չորացնում արևին. այդ վիճակում կարելի է մի քանի ամիս պահել: Շար սննդարար է, պարունակում է երկաթ (5 անգամ ավելի, քան փավարի մսում), կալիում, կալցիում, ֆոսֆոր, մագնեզիում, ցինկ, պրիմ: 2. Չապուլիններ. սրանք Sphenarium ընտանիքի մորեխներ են, որոնք հաճույքով ուրում են Մեքսիկայի հարավում՝ համեմված սխտրով, աղ-բիբարով ու լայմի հյութով: Լավ փայլակաձ լինելով պարունակում է մինչև 70% սպիտակուց: Քանի որ շար համեղ են, հավաքողները դաշտերն այնպես են սրբում, որ այլևս պեստիցիդ օգտագործելու կարիք չի լինում:

3. Որդանման թրթուրներ. փարածված են Ավստրա-

լիայի այն վայրերում, ուր աճում են նիվենին ու սև ակացիան: Օգտագործում են թե՛ հում վիճակում (նշի համ ունի), թե՛ թեթևակի խորոված (փայլակաձ ճրի համ ունի):

4. Մեծամրջյուններ. սրանցում ևս սպիտակուցի պարունակությունը բարձր է՝ մոտ 40%, իսկ Վենետուելայում փարածված Syntermesaculeosus տեսակը մինչև 64% սպիտակուց է պարունակում, հարուստ է երկաթով, կալցիումով, ճարպաթթուներով, անփոխարինելի ամինաթթուներով: Հարավային Ամերիկայում և Աֆրիկայում օգտագործում են փայլակաձ, չորացրած, բանանի փերկներում շոգեխաշած կամ սպիտակած ձևով:

5. Աֆրիկյան կնճիթաբզեզ (Rhychophorus phoenicis). հավաքում են արմավենու բներից, 5x10 սանտիմետր չափերով: Չափազանց համեղ և սննդարար միջատներ են՝ ճարպաթթուների, երկաթի և ֆոսֆորի բարձր պարունակությամբ. դրանց օգտագործում են թե՛ հում, թե՛ եփած ու փայլակաձ տեսքով:

6. Փայտամուկներ. աչքի են ընկնում սպիտակուցների, կալիումի, ֆոսֆորի բարձր պարունակությամբ: Լիարժեք սնունդ է համարվում Ասիայի, Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի երկրներում:

7. Մթերաբզեզներ (Tenebrio molitor). արևմուտքում սննդակարգում հաճախ հանդիպող միջատներից



է, արիեստական կերպով բազմացնում են Նիդերլանդներում թե՛ փեղում օգտագործման, և թե՛ արտահանման համար: Հարուստ են միկրոարրերով: Սպիտակուցների որակով գերազանցում է հորթի մսին, դրա հետ մեկտեղ, հարուստ է ճարպաթթուներով, որոնք հազվադեպ են պարասխանում կենդանական աշխարհում:

Մոնրեալում (Կանադա) գրվող Մաքսիլի համալսարանի մի խումբ ուսանողներ վերջերս շահել են «Hull Prize» սոցիալական հետազոտությունների մրցանակ՝ միջատներից սպիտակուցներով հարուստ ալյուր սփռալու փեխնոլոգիայի մշակման և 1 միլիոն դոլար՝ դրա զանգվածային արտադրությունը կազմակերպելու համար:

ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

ՏԱՎՈՐԻԿԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՕՐԵՐԸ

Տավորիկ գյուղը հիմնադրվել է անցած դարի 80-ականների սկզբին: Այստեղ ծանանակին բնակություն են հաստատել հանրապետության տարբեր վայրերից եկած մարդիկ: Գյուղն ունի 300 բնակիչ, սակայն այսօր այնտեղ ապրում է շուրջ 47 ընտանիք, գործում է 9-ամյա դպրոց՝ 19 աշակերտով: Փոքրիկ գյուղ է, ու թվում է, եթե շատ ուզես, կտեղավորես ակիդ մեջ:

Գյուղն ունի 1818 հա հողատարածք, որից՝ 302 հա-ն խաղողի, 280 հա-ն՝ պտղատու այգիներ են: Գյուղում նաև զբաղվում են բանջարեղենի մշակությամբ, եգիպտացորենի, ցորենի, գարու և արևածաղկի մշակությամբ:

Տավորիկում արդեն սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները, այդ պատճառով, առանց այն էլ սակավամարդ Տավորիկի փողոցներում այս օրերին մարդ չես գտնի: Որևէ մեկին հանդիպելու համար պետք է դաշտ գնաս: Երբ ասել են Ֆարից հաց քամող, երկի տավորիկցուն ու հարակից գյուղերի բնակիչներին են նկատի ունեցել: Գարնանում են՝ որքան նվիրված պետք է լինես հողիդ, արմատներիդ, որ անապատի ու քարերի մեջ ծառեր

է պատասխանել: Տեղում է սնուն մարդուն, առանց հողի գյուղացին ոչիլ է: Իմ ընտանիքով տարիներ շարունակ զբաղվում են հողագործությամբ, դժգոհ չեմ, աշխատող մարդը սոված չի մնա: Գյուղացու համար այսօր շատ խնդիրներ կան, բայց դա էլ երկի ծանանակի խնդիր է: Խաղողի բերքն արդեն հեշտությամբ է իրացվում, դա արդեն խաղողագործի համար մեծ օգնություն է:

Հայթաղցի Լորիկ Նիկողոսյանին ու իր երկու որդիներին հանդիպեցինք իրենց այգում, որտեղ 2,5 հա տարածքի վրա մշակում են դեղձ, ծիրան, սալոր, կեռաս: Հողագործը, որդիների հետ միասին, արդեն սկսել է ծառերի էտը: 1986թ.-ին, երբ ժամանակավորապես հաստատվեց Տավորիկում, երբեք չէր պատկերացնի, որ շինարարի աշխատանքը կտողնի ու կլծվի հողի աշխատանքին: Տեղացիները էի եկել, հետո մի քանի ամիս անց, հող և տուն տվեցին, մնացի:

Բացի հողագործությունից, նա և իր երկու որդիները գյուղի մեխանիզատորներն են, որը նրանց համար հավելյալ եկամտի աղբյուր է: Որդիներին ամուսնացրել է, մի որդու համար հասցրել է տուն կառուցել: Տղաներից մեկն՝ Էդգարը,

ՄԿՍՎԵԼ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գարունը յոթ սարի հեքում չէ, իսկ Արմավիրի մարզում վաղուց սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Արմավիրի ԳԱՄԿ-ի գյուղատնտեսական խորհրդատուները, մասնագետներ՝ Արայիկ Վարդանյանի և Սամվել Ստեփանյանի հետ միասին, օրերս այցելեցին մարզի Արևադաշտ, Արտամետ, Տավորիկ և Յուշակերտ համայնքներ: Բաղրամյանի տարածքի նշված գյուղերն, ի տարբերություն մարզի այլ գյուղերի, երիտասարդ են և ոչ այնքան խիտ բնակեցված: Նշված գյուղերում զբաղվում են բանջարեղենի մշակությամբ, ցորենի, գարու, եգիպտացորենի մշակությամբ, այգեգործությամբ, պտղաբուծությամբ: Մեծ տարածություններ են գրավում դեղձի, սալորենու, ծիրանենու, կեռասենու և խաղողի այգիները, որոնք տնկվել են վերջին տասը տարիների ընթացքում:

Այցելության նպատակը՝ ֆերմերների համար տեղում խորհրդատվական ծառայություններ մատուցելն էր՝ կապված գարնանային գյուղատնտեսական աշխատանքների հետ, ինչպես նաև պարզել ցրտաշունչ ձմեռվանից հետո տվյալ տարածքներում ցրտահարության աստիճանը:

Նշված համայնքներում ԳԱՄԿ-ի գյուղատնտեսության խորհրդատուներ՝ Սիմոն Ասատրյանը, Սիմոն Սահակյանը, Սարգիս Ղարաբեյլյանը, Եփրեմ Առաքելյանը այցելության ընթացքում ուսումնասիրեցին՝ դեղձի, սալորի, ծիրանենու, կեռասենու այգիները, ինչպես նաև կազմակերպեցին խորհրդատվություն՝ խաղողի վազի և պտղատու ծառերի էտի և ձևավորման աշխատանքների ճիշտ կատարման վերա-

բերյալ: ԳԱՄԿ-ի մասնագետ Արայիկ Վարդանյանը նշեց, որ խաղողի չթաղված այգիներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցրտահարվածության աստիճանն այդ այգիներում բավականին ցածր է:

Ի տարբերություն խաղողի՝ ծիրանենու, կեռասենու, սալորենու այգիներում ցրտահարվածություն չի նկատվել: Բայց պտղատու և խաղողի այգիների վնասի աստիճանի վերաբերյալ վերջնական արդյունքները պարզ կդառնան մարտի



վերջերին՝ բողբոջները բացվելուց հետո: Տավորիկ համայնքի գյուղատնտես Սամվել Յակոբյանը շնորհակալություն հայտնեց Արմավիրի ԳԱՄԿ-ի աշխատակիցներին՝ նշելով, որ տարիների ընթացքում շարունակվող համագործակցության արդյունքում, միշտ էլ ստացել են խորհրդատվություն՝ գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին և ճիշտ կատարելու վերաբերյալ:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ



տնկես, բերք ստանաս ու անհաշիվ դժվարություններից չընկճվես ու չհիասթափվես:

Գյուղի դաշտամիջյան ճանապարհին հանդիպեցինք Գառնիկ Ղազարյանին. նա գյուղի ջրբաժանն է: Հումորով, ասող-խոսող մարդ, իսկական գյուղացի: Գյուղում բնակվում է 1991 թվականից, 2,5 հա սեփականաշնորհված հողատարածք ունի՝ առվույտ, եգիպտացորեն, արևածաղիկ է մշակում: Տերևաշարժից հետո եկա, հարմարվեցի, մնացի: Ջուր բաժանելիս աշխատում են ոչ մեկին չնեղացնել, չնայած դժվարությամբ, բայց ստացվում է,՝ կատարվում է նույն է նա:

Քարքարոտ, գրեթե անապատային Տավորիկի հողերի համար ոռոգման ջուրն անհրաժեշտ է, մանավանդ ամռան տապին: Փրկությունը կաթիլային ոռոգումն է, բայց դրան անցնելու համար ֆինանսական մեծ ներդրումներ են անհրաժեշտ:

46-ամյա Մաթևոսը հարևան Նոր-Կեսարիայից է, Տավորիկում 6 հա խաղողի այգի ունի: Բացի դրանից, վարձակալությամբ վերցված հողատարածքներում զբաղվում է եգիպտացորենի և բանջարեղենի մշակությամբ: Անցած տարի այգեթաղ չի կատարել: Տեղավորությունն իմն է,՝ ասում է այգետերը, չպատկերացրեցի ցուրտ կլիմի, հույս ունեմ այգիս չի ցրտահարվել: Իսկ թե ցրտահարվածության դեպքում ինչ կանի, Մաթևոսը դժվարանում

վարպետորեն ձևավորում է ծառը, և այդ ընթացքում պատմում, որ չնայած բազմաթիվ դժվարություններին, չի պատրաստվում գյուղից հեռանալ: Տեղացի տարի առաջ, երբ նոր էինք այգին հիմնում, ամբողջ տարածքը քարերի կույտ էր, հատիկ-հատիկ քարերից մաքրել ենք, ծառեր տնկել: Դժվարություն ամեն տեղ կա, ուղղակի չպետք է վախենալ: Հողը պետք է սիրես, որ ինքն էլ քեզ սիրի: Որդին հողից սովորել է, որ ինչ աշխատանք էլ լինի, պետք է սիրով անի, որ հաջողության հասնի:

Այսօր տավորիկցին պատրաստ է բոլոր դժվարությունները հաղթահարել, միայն թե տարին բարեբեր լինի: Ամռան շոգին, երբ ջրի ամեն կաթիլը ոսկու արծեք է ստանում, տավորիկցին մտքում հիասթափվում է, երբեմն էլ՝ գայրանում, թե ինչ է կորցրել այս քարքարոտ տարածքներում, մտածում է՝ աշունը այլ տեղ տեղափոխվելու մասին, բայց, երբ նայում է արդեն բերքի տակ կռացած այգիներին, ցորենի, եգիպտացորենի ու գարու ծիւցող արտերին, հիասթափությունը վերափոխվում է հպարտության: Տավորիկցու 30-ամյա պատմությունը պայքար է եղել ամեն մի թիզ հողի համար՝ բնության, անապատի, եղանակի անբարենպաստ պայմանների դեմ, բայց ամենակարևորը, երբեք պարտվող չի եղել: Քարքարոտ հողի իսկական տերը հենց ինքն է:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

«Գարնան օրը տարի է կերակրում»

Մոսկով Մարգարյանն Արագածոտնի մարզի Մուսեր համայնքի առաջավոր ֆերմերներից է: Չբաղվում է և՛ դաշտավարությամբ, և՛ անասնապահությամբ: Մշակում է հացահատիկ, տնամերձ հողամասում՝ պտղատու ծառեր և տարբեր տեսակի մշակաբույսեր: Ֆերմերը կիրառում է հացահատիկի մշակության ինտենսիվ տեխնոլոգիա, և նրա տնտեսությունը համայնքում օրինակ է ծառայում նրանց համար, ովքեր զբաղվում են հողագործությամբ:

- Պարոն Մարգարյան, կը բացատրեմ և ցրտահարման վտանգը: Ներկա պահին ցանքերը նորմալ վիճակում են: ԳԱՄԿ-ի խորհրդատուների առաջարկով պատրաստվում են աշունացանի վաղ գարնանային սնուցման աշխատանքներին: Պլանավորում են յուրաքանչյուր հեկտարին տալ 200 կգ ա մ ն ճ ի ա կ ա յ ի ն



վտանգ և ներկայումս ինչպիսի՞ն է ցանքերի վիճակը: - Աշունը լավ մշակված ցելադաշտի և խոտածածկից ազատված դաշտերի վրա կատարել են 12 հա աշունացան ցորենի անջրդի ցանք: 4-ական հեկտար ցանել են Ռ-Ղ-ից ներկրված «Յուկա» և «Վասա» սորտերի էլիտային սերմացու, իսկ 4 հա-ի վրա՝ սեփական արտադրության առաջին վերարտադրության «Բեզոտայա 1»: Աշունը՝ մինչև ձմեռը, ցանքերը ծղել և քիմիկատվել են, իսկ ձմռանն առկա կայուն ձյունածած-

լանյութի անհրաժեշտ պաշար: Այնպես որ, հողի քեշի գալու հետ մեկտեղ, կատարելու են ցանքի աշխատանքները:

- ՀՀ կառավարությունը վերջին տարիներին գյուղացիական տնտեսություններին տրամադրում է սուբսիդավորված դիզելային վառելիք, պարտանյութ, սերմացուներ, ցածր տոկոսադրույքով վարկեր: Օգտվո՞ւմ եք արդյոք այդ միջոցներից: - Միանշանակ օգտվել են և՛ սուբսիդավորված վարկերից, և՛ սուբսիդավորված վառելիքից, ինչպես նաև պարտանյութերից և սերմերից: Հացահատիկի իմ ցանքերի մեծ մասում ցանում են Ռ-Ղ-ից ներկրված ցորենի, գարու սերմացուներ, որոնք նախորդ տարում անջրդի պայմաններում ապահովել են ցորենի համար մինչև 40, իսկ գարու համար՝ մինչև 35 g / հա բերք: Կարևորը՝ օժանդակություն է, որը շատ անհրաժեշտ է բոլորիս:

Այս օժանդակության շնորհիվ է, որ համայնքում չմշակվող հողատարածքներ չկան, և գյուղացիական տնտեսությունները ստանում են համեմատաբար կայուն բերք: Աշխատում են օրնիբուն, որովհետև կարծում են, որ աշխատանքի շնորհիվ կարելի է ամեն ինչի հասնել:

Անուշ Մելքոնյան
Արագածոտնի ԳԱՄԿ

ՀԵՏԱԲՐԵՒՐ, ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ԶԱՐՄԱՆԱԼԻ

ԿԱԿԱՈՆ՝ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՍՆՈՒՆՂ



Կակաոյի հայրենիքը Օրինկո գետի ավազանն է: Հիմնական տեսակներն են Dombeya vallichii (հայրենիքը՝ Մադագասկար) և Cola (հայրենիքը՝ Կենտրոնական և Արևմտյան Աֆրիկա): Այս ընտանիքի բույսերը մշտադալար ծառեր են, որոնք առանձնանում են նրանով, որ մանր վարդագույն ծաղիկները փնջերով աճում են անմիջապես բնի վրա. այս երևույթը կոչվում է «Կաուլիֆլորա»:

Theobroma cacao-ն թարգմանվում է՝ աստվածների սնունդ: Կակաոն այսպես է անվանել Կ. Լիննեյը: Կակաոն բազմանում է սերմերով և վեգետատիվ եղանակով: Երկրորդ դեպքում պտուղն ավելի արժեքավոր է: Ծառը պտուղ է փախի երրորդ տարում, պտուղը հասարակելու է, պարունակում է 30-60 սերմ: Պտղի երկարությունը հասնում է 7 սմ-ի: Տերևները խոշոր են:

Ացտեկները Մեքսիկայում կակաոյի դառը ըմպելիքը համեմուն էին պղպեղով և վանիլով: Մեքսիկայի նվաճումից հետո կակաոն Եվրոպա է բերել իսպանացի Կորտեսը: 17-րդ դարից բույսը մշակվում է աշխարհի արևադարձային գոտիներում: Առաջին շոկոլադե սալիկներն արտադրվել են 19-րդ դարի կեսերին, երբ Հոլանդիայում սովորեցին սրանալ կակաոյի յուղը: Հավաքելուց հետո սերմերն արտահանվում են ֆերմենտացված, չորացված վիճակում, վերջնական մշակումը կապարվում է գործարանային պայմաններում: Կակաոյի յուղն ու փոշին օգտագործում են շոկոլադե արտադրության և խոհարարության մեջ: Իտալացիներն ու իսպանացիները կակաոյի փոշին խառնում են սոխի, սխտորի, լո-

լիկի հեղ, համեմուն են ձկնային և մսային ուրեթերները:

Կակաոն պարունակում է տեոբոմին, մարիխուանային բնորոշ ֆենիլալկիլամին և կոֆեին: Ի տարբերություն սուրճի, կակաոյի ըմպելիքը կախվածություն չի առաջացնում, դրա ազդեցության ժամանակը 3-4 ժամ է: Կակաոն ավելի սննդարար է կաթի հեղ, իսկ առանց շաքարի պարարաստված 100 մլ կակաոյի ըմպելիքը պարունակում է 65 կկալ, նույն քանակի սուրճը՝ 35 կկալ:

Կակաոյի ըմպելիքն առաջացնում է ուրախության, երջանկության և նույնիսկ սիրո զգացում: Կակաոն պարունակում է՝ կալիում, մագնեզիում, կալցիում, ֆոսֆոր, երկաթ, փոսֆոր, ճարպեր, ածխաջրեր, սպիտակուց, կենսաբանորեն ակտիվ P խմբի վիտամիններ, չհագեցած ճարպային թթուներ: Պղնձի պարունակությամբ (4,5 մգ՝ 100 գրամում) կակաոյի փոշին զիջում է միայն ձողաձկան լյարդին: Պղնձը կարևորագույն դեր է կատարում յոդի յուրացման գործընթացում, որն էլ կարևորում է կակաոյի օգտագործումը Հայաստանի՝ յոդով ոչ հարուստ բնակչության պայմաններում:

Հեպտերոիդի, թունավոր խալիպի դեպքում օրգանիզմից դուրս են բերվում կալցիումն ու կալիումը: Մասնագետները խորհուրդ են տալիս բացը լրացնել կակաոյով, որի փոշու մեջ կալիումի պարունակությունը (1,7 գրամ՝ 100 գրամում) զիջում է միայն թեյին (2,5) գրամ. օրգանիզմի օրվա պահանջարկը 1,5 - 2 գրամ է: Կակաոյի փոշու մեջ բարձր է նաև երկաթի պարունակությունը. 20 գրամ կակաոյի փոշին կհագեցնի օրգանիզմի պահանջարկի 10%-ը: Առանձնապես կարեւորվում է կակաոյի հակաօքսիդանտ հատկությունը: Բազմաթիվ հեղուկությունների միջոցով ապացուցվել է, որ կակաոն և դառը շոկոլադե, չափավոր օգտագործման դեպքում, կանխում են ուռուցքների առաջացումը, պահպանում մաշկը վաղաժամ ծերացումից, օգտակար են սրտի հիվանդությամբ տառապող մարդկանց, պահպանում են սիրտանոթային համակարգի, լավացնում հիշողությունը:

Դանդուռը մոլախոտ չէ

Դեռևս Հիպոկրատի ժամանակներից, դանդուռն օգտագործվել է անքնության, թունավոր օձերի և մեղվի խայթոցից առաջացած վերքերը բուժելու նպատակով: Այն օգտագործվում է նաև դիզենտերիայի բուժման համար: Դանդուռի վերգետնյա հարվածը պարունակում է սպիտակուցներ, շաքար, տարբեր մակրոէլեմենտներ՝ կալցիում, մագնեզիում, նատրիում, կալիում, օրգանական թթուներ, ալկալոիդներ, սապոնիններ, գլիկոզիդներ, նորադրենալին, նաև բազմաթիվ վիտամիններ: Դանդուռի տերևները պարունակում են մեծ քանակությամբ վիտամին C, այլ վիտամիններ՝ E, PP, կարոտին, դոպամին, օրգանական թթուներ, հանքային աղեր, և այլն: Դանդուռի՝ աղցանների, ապուրների տեսքով հաճախակի օգտագործումը նվազեցնում է արյան մեջ խոլեստերինի քանակությունը, նվազեցնում աթերոսկլերոզի առաջացումը: Թարմ բույսն օժտված է հակաբորբոքային, միզամուղ, լեղամուղ, շաքարի քանակությունը որոշակիորեն նվազեցնող հատկություններով: Դանդուռի թարմ բուսահյութն օգտակար է երիկամների բորբոքային հիվանդությունների, լյարդի և միզապարկի համար:



դանդուռն ունի հակաբորբոքային նշանակություն:

Դանդուռի բուն հայրենիքը Հնդկաստանն է: Բույսը մեծ տարածում ունի նաև Հայաստանում: Օգտագործվում է նաև լյարդի և երիկամների հիվանդությունների, սիֆիլիսի արտաքին, ավիտամինոզի, կաթվածի, վարակիչ ծագում ունեցող հիվանդությունների դեպքում: Որոշ երկրներում այն օգտագործվում է որպես սիրտ-անոթային հիվանդություններն ապաքինող միջոց: Սերմերի ջրաթուրմն օգտակար է սրամոքսի խանգարումների և պտորիակի դրսևորումների դեպքում:

Ի դեպ, հին եգիպտացիները թարմ դանդուռը մշտապես օգտագործել են սննդի մեջ: Հիերոգլիֆներում նույնիսկ այն հիշատակվում է՝ «Մակի-մակայ» անվամբ: Հնագույն բժշկության մեջ դանդուռն իր ուրույն տեղն է ունեցել՝ նաև գլխացավերի, կոնյուկտիվիտի, արյունաթթության, ճիճուների, սպառնքալիսի հիվանդությունների բուժման համար: Արաբների մոտ նույնիսկ լեգենդ կա, ըստ որի՝ Սոհամեդը դանդուռի միջոցով բուժել է ուրբերի հիվանդությունը՝ քայլելիս ուրբերը հայելով դանդուռի տերևներին: Արաբ բժիշկ Իբն Էլ-Բենպերը դանդուռով բուժել է լյարդի, երիկամների հիվանդություններն ու շաքարախտը: Այն օգտագործվել է նաև որպես արյունաստեղծ միջոց:

Advertisement for agricultural products. Title: ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԳՐՈՒՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը. Includes pricing for subscriptions and contact information.

Footer information for Agronews. Includes contact details: Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80. E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am. Also includes address: Տպագրանակ՝ 1100, 2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 Մ 000226.